«Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23.1-ին հոդվածի՝ 1-ին մասի 3-րդ կետում «միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողը (մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամը)» բառերը փոխարինել «մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամը» բառերով:
- Օրենքի 23.2-րդ 3-րդ մասից հանել «և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծննդօգնության պետական հավաստագիրը: Երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծննդօգնության պետական հավաստագիրը չստացած կնոջը մայրության նպաստ չի նշանակվում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի:» բառերը:
- Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի 27-րդ, 28-րդ, 28.1-ին հոդվածների դրույթները չեն տարածվում մինչև 2020 թվականի հունվարի 1-ը ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների վրա:»:

- Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
- Եթե 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածում ներկայացված՝ խնամքի նպաստ նշանակելու դիմումը մերժվել է անձի՝ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող հանդիսանալու հիմքով, ապա սույն օրենքն ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում նոր դիմում ներկայացվելու դեպքում

դիմելու օր է համարվում նախորդ դիմումը ներկայացնելու օրը: Այս դեպքում չվճարված խնամքի նպաստի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար (ամբողջությամբ):

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝
- 1-ին մասի 1-ին կետից հանել «միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողների կամ» բառերը,
- 4-րդ մասում «ժամանակավորապես» բառերը փոխարինել «անորոշ կամ որոշակի ժամկետով» բառերով, իսկ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Սույն հոդվածի 3.1-ին մասի 2-րդ և 3-րդ կետում նշված դեպքերում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկվում է առանց հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործունեությունը դադարեցնելու:»,

- 6-րդ մասում «հիմնական գործատուի» բառերը փոխարինել «գործատուներից մեկի (վարձու աշխատողի ընտրությամբ, ում ներկայացվել է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ)» բառերով:

- Օրենքի 22-րդ հոդվածում՝
- 8-րդ մասը 3-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Գործատուի վճարած եկամուտը (իսկ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողի դեպքում՝ նաև սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամուտը) վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձում հաշվառելիս համամասնորեն նվազեցվում է, եթե այդ գործատուի մոտ հղիության և ծննդաբերության արձակուրդի (որպես ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ, որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու) տևողությունը մյուս գործատու(ներ)ի մոտ ունեցած հղիության և ծննդաբերության արձակուրդի (որպես ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ, որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցրնելու) առավելագույն տևողությունից կարճ է:»,

2) 10-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին մասով.

«10.1. Սույն հոդվածի 7-րդ, 8-րդ, 10-րդ մասերով սահմանված կարգով միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս վարձու աշխատողի՝ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված լինելու ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա համար որպես տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտ ընդունվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը:»:

- Օրենքի 24-րդ հոդվածի՝
- 6-րդ մասում «օրվանից» բառը փոխարինել «օրվան հաջորդող ամսվանից» բառերով:
- Օրենքի 25-րդ հոդվածի՝
- 3-րդ մասը «վարձու աշխատողին» բառերից հետո լրացնել «ժամանակավոր անաշխատունակության» բառերով, «աշխատավայրի» բառերը փոխարինել «(նպաստը հաշվարկող և նշանակող)» բառերով, իսկ 5-րդ մասի 4-րդ կետում «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով,
- 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1 Եթե մայրության նպաստ հաշվարկելուց, նշանակելուց և վճարելուց հետո վարձու աշխատողը այլ գործատուի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր, ապա վարձու աշխատողին հղիության և ծննդաբերության արձակուրդ տալու մասին անհատական իրավական ակտը այլ գործատուն ընդունում է հիմնական (նպաստը հաշվարկող և նշանակող) գործատուի կողմից վավերացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լուսապատճենի հիման վրա:»:

- Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Վարձու աշխատողի մայրության նպաստը վերահաշվարկվում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում իր եկամտի վերաբերյալ վարձու աշխատողի կողմից գործատուին (նպաստը հաշվարկող և վճարող) լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում: Այս դեպքում մայրության նպաստը վճարվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

2) 5-րդ մասում «ընդհատվելու» բառից հետո ավելացնել «, իսկ համատեղությամբ աշխատելու դեպքում՝ գործատուներից մեկի մոտ ընդհատվելու» բառերը:

- Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա (այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2020 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո է):
- Եթե վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակությունն

առաջացել է 2019 թվականին և Օրենքով սահմանված կարգով այդ օրվա դրությամբ նա չի ունեցել ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունք, սակայն նրա ժամանակավոր անաշխատունակությունը շարունակվել է 2020 թվականին և նա, որպես վարձու աշխատող, ձեռք է բերել ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունք, ապա ժամանակավոր անաշխատունակության առաջին օր է համարվում 2020 թվականի հուվարի 1-ը:

- Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, եթե միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողին մայրության նպաստ նշանակվել և վճարվել է «Պետական նպաստների մասին» օրենքով սահմանված կարգով, ապա նրան սույն օրենքով սահմանված կարգով մայրության նպաստ չի տրվում: